Պատվիրվել է գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների վահանակները, որոնք կփակցվեն գերեզմանատան երկու մուտքերի մոտ: Գերեզմանատան աղբահանությունը կատարվում է ամենօրյա:

20.Պահպանված չէ
գերեզմանատների սանիտարական գոտու (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշում հավելված N4, կետ 10):

Գերեզմանատունը գտնվում է քաղաքի կենտրոնական մասում և պարսպապատ է:

21.Պահպանված չէ
վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանում գոտու (ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 26-ի N 1910-Նորոշումհավելված N7, կետ 8):

Հուղարկավորությունները կազմակերպվում են այսօրվա գործող գերեզմանոցում, որտեղ նոր գերեզմանատեղերի համար չկան և չեն տրամադրվում տարածքներ:

22.Պահպանված չէ
մրցութային հանձնաժողովներն ստեղծվում են համայնքի ղեկավարի գլխավորությամբ, որոնց կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարի աշխատակազմի համապատասխան մասնագետներ, ավագանու անդամներ և համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ:

Համայնքի ղեկավարի 17 ապրիլի 2014թ. 2014թվականի N 30-Ա կարգադրությամբ, ստեղծվել է մրցութային հանձնաժողով, ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001թվականի թիվ 286 որոշման պահանջների համապատասխան:

23.Թերի է պահպանված
Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները:

Ձեռնարկվում են միջոցներ քաղաքաշինական կադաստր վարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վոլոդյա Խլոյան

Կատ. ֆինանսատնտեսական բաժնի պետ՝ Ռ. Հլոյան